

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Արցախի Գանձասար հնամենի վանքում, ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանի, կատարվեց Արմեն արկ. Մարկոսյանի քահանայական ձեռնադրությունը:

Նոյեմբերի 24-ին Գանձասարի վանքում տեղի էր ունեցել «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ըստ ձեռնադրության Մաշտոցի՝ խարտավիլակությամբ Տ. Վրթանես աբդ. Աբրահամյանի: Հոգեշնորհ հայր սուրբը վկայել էր նորընծայի հոգևոր և մտավոր պատրաստակամության մասին՝ արժանանալու քահանայական ձեռնադրության:

Նոյեմբերի 25-ին, կիրակի, Գանձասարի եկեղեցու Ս. Սեղանին պատարագ է մատուցում Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը: Պատարագի ընթացքում սրբազան հայրը կատարում է քահանայական ձեռնադրություն: Բազմադարյա եկեղեցու կամարների տակ հնչում է հանդիսավոր ու հաղթական «Աստուածային և երկնաւոր շընորհ, որ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ» շարականը: Այնուհետև պատարագիչ սրբազանը, ձեռքը դրնելով նորընծայի գլխին, կարդում է ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղոթս արարէք զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Ողջույնից առաջ Տ. Պարգև սրբազանը կատարում է անվանակոչության և օծման արարողությունը: Արմեն արկ. Մարկոսյանը վերանվանվում է Տ. Գրիգոր քահանա:

Ձեռնադրության սրբազան արարողությունից հետո գերաշնորհ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, շնորհավորելով նորընծային, հոգեշունչ քարոզ է խոսում, ուր մասնավորապես շեշտում է հայ հոգևորականության դերն ու կարևորությունը մեր ժողովրդի կյանքում, մանավանդ Արցախ աշխարհում, որն ավելի կարիքն ունի հոգևոր սննդի ու ոգեկան գոտեպնդման: Սրբազան հայրը իր քարոզում հույս հայտնեց, որ Տ. Գրիգոր քահանան անձնուրաց նվիրվածությամբ կքահանայագործի՝ ի սպասավորություն Հայ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:

Սուրբ պատարագին ներկա էին Արցախի թեմի ողջ հոգևոր դասը, բազմաթիվ ուխտավորներ ինչպես Արցախից, այնպես էլ Մայր Հայրենիքից:

***

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծային՝ մաղթելով, որ նա լինի «Հովիվ քաջ» և անմնացորդ նվիրվածությամբ ծառայի մեր բազմաչարչար ժողովրդին:

Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ



Ծնվել է 1956 թվականին Երևանում: Հանրակրթական դպրոցում սովորելու հետ մեկտեղ, ավարտել է նաև Սարաջևի անվան երաժշտական դպրոցը:

1972—1976 թվականներին սովորել և ավարտել է Երևանի երաժշտական մանկավարժական ուսումնարանի ջութակի բաժինը: Ավարտելուց հետո աշխատել է Հրազդան քաղաքի № 1 երաժշտական դպրոցում, Հ. Կ. Մ. երաժշտական կոլեկտիվների միավորումում, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, Հայպետֆիլհարմոնիայում:

1978 թվականից երգել է Երևանի Ս. Զորավոր եկեղեցու երգչախմբում:

1981 թվականին Արսեն եպս. Բերբերյանի կողմից ստացել է դպրության չորս աստիճաններ և ուրար կրելու իրավունք: Որպես դպիր ծառայել է Երևանի Ս. Գևորգ, Աշտարակի Ս. Մարինե, Սիսիանի Ս. Հովհաննես, Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցիներում:

1990 թվականի հունիս ամսից ծառայել է Արցախի՝ Ամարասի Սուրբ Գրիգորիս եկեղեցում: Սույն թվականի սեպտեմբերի 9-ին, ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1990 թվականի նոյեմբերի 25-ին Պարգև սրբազանի կողմից ձեռնադրվել է քահանա՝ պաշտոնավարելու Գանձասարի վանքում: